

«ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենք կարևորում ենք տեղեկատվության գաղտնիության Ձեր իրավունքը և ձեռնարկում ենք բոլոր միջոցները՝ պաշտպանելու այն սույն քաղաքականությանը համապատասխան: Խնդրում ենք ուշադրությամբ ուսումնասիրել այն՝ հասկանալու համար մեր գործունեության բնույթն այդ ուղղությամբ և թե ինչ աշխատանք ենք տանում Ձեր տեղեկատվության հետ: Օգտվելով մեր կայքից՝ Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը սույն գաղտնիության քաղաքականության դրույթներին:

Ի՞նչ տեղեկատվություն ենք մենք հավաքում

Երբ Դուք կատարում եք նվիրաբերություն «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամին մեր կայքի միջոցով [<http://www.teachforarmenia.org/friends-of-teach-for-armenia>] կամ ոչ առցանց կարգով, կատարվում է Ձեր անվան, հեռախոսահամարի, էլեկտրոնային փոստի հասցեի, բնակության կամ գրանցման վայրի և նմանատիպ այլ տվյալների հարցում:

Մենք նաև հարցնում ենք Ձեր անունը և էլեկտրոնային փոստի հասցեն, երբ Դուք գրանցվում եք՝ ստանալու մեր ազդագրերը:

Երրորդ կողմ հանդիսացող հարթակներում (օրինակ՝ PayPal համակարգում) կարող է կատարվել այնպիսի տվյալների հարցում, ինչպիսին Ձեր քրեդիտ քարտի համարն է: Նման տեղեկատվությունը մեզ մնում է անհայտ, և դրա գաղտնիությունը կանոնակարգվում է երրորդ կողմ հանդիսացող հարթակի գաղտնիության պայմաններով և քաղաքականությամբ:

Մեր ինտերնետային կայքը Ձեզնից հավաքում է որոշ տվյալներ և Ձեր կողմից մեր կայքից օգտվելուն հետևում տեղեկատվության ստացման և դրան հետևելու հատուկ ավտոմատացված տեխնոլոգիաների՝ քուքիների (cookies) կամ ուեբ բիբոնների (web beacons) միջոցով: Մենք կարող ենք նաև ավտոմատացված եղանակով ստանալ տվյալներ Ձեր բջջային հեռախոսի և ինտերնետային կապի կամ իրական ժամանակում Ձեր սարքի գտնվելու վայրի մասին, ինչպես նաև հաշվառել մեր կայքի այցելուների IP հասցեները: Որոշ տվյալներ կարող են շրջանցվել:

Մեր կողմից հավաքված որոշ տվյալներ անհատապես ճանաչելի են, ինչպես օրինակ՝ Ձեր անունը և հեռախոսահամարը: Այդուհանդերձ, որոշ տվյալներ կարող են կուտակվել համահավաք ձևով՝ ելնելով կայքի որակական և ֆունկցիոնալ բարելավման և այցելուներին առավել որակյալ ծառայություն մատուցելու նկատառումներից:

Ինչպե՞ս ենք մենք հավաքում տեղեկատվություն Ձեր մասին:

Մենք կատարում ենք Ձեր մասին տեղեկատվության հարցում (օրինակ՝ գրանցման ձևաթղթերի միջոցով) կամ այդ նպատակով կիրառում ենք տվյալների հավաքման և դրանց հետևելու ավտոմատացված տեխնոլոգիաներ (օրինակ՝ Google Analytics-ի միջոցով):

Ինչպե՞ս ենք մենք օգտագործում տեղեկատվությունը Ձեր մասին

Մենք օգտագործում ենք մեր կողմից հավաքված տվյալները՝ հետևելու մեր ֆինանսավորման գործընթացներին, ուղարկելու հանգանակությունների վերաբերյալ ծանուցագրեր և շնորհակալական նամակներ, ավելացնելու Ձեզ մեր հասցեատերերի ցուցակում և Ձեր տվյալները ներառելու մեր հանրային իրազեկման նյութերում, ինչպիսին «Տարեկան զեկույցն» է. այդպիսի նյութերը կարող են հրապարակվել տպագիր, բանավոր կամ այլ եղանակներով: Նվիրաբերություն կատարելով «Դասավանդիր, Հայաստան»-ին՝ Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը մեր կողմից Ձեր մասին անձնական տեղեկատվության օգտագործմանը՝ ներառյալ Ձեր հանգանակության չափի մասին տեղեկատվություն զետեղելը մեր հանրային իրազեկման նյութերում՝ բացառությամբ անանուն մնալու Ձեր նախընտրության դեպքում:

Մենք նաև օգտագործում ենք այս տեղեկատվությունը ընդհանուր բնույթի գործառնական նպատակների համար, ինչպիսիք են մեր կայքի բովանդակությունը կամ Ձեր կողմից որոնվող որևէ տեղեկատվություն Ձեզ մատուցելը, մեզ տեղեկատվություն տրամադրելու տարաբնույթ նպատակների բավարարումը, ծանուցումներ կամ հաղորդագրություններ ուղարկելու միջոցով այլ կերպ Ձեզ հետ կապ հաստատելը, մեր սերվերում ի հայտ եկող խնդիրների պարզաբանումը, մեր ինտերնետային կայքի վարումը, ընդհանուր տեղեկանքների վերլուծությունը և այցելուների թվի շարժին հետևելը, ժողովրդագրական լայն ինֆորմացիայի ձեռք բերումը, ինչպես նաև մեր և Ձեր միջև գործող պայմանագրերով ծագող պարտավորությունների կատարումը և իրավունքներից օգտվելը:

Մեր ինտերնետային կայք կատարած այցելությունների վերաբերյալ մեր հավաքած տեղեկատվությունը օգնում է մեզ բարելավել կայքը և այն ավելի լավ ծառայեցնելու հանրությանը, ինչպես նաև պատկերացում կազմել մեր լսարանի ծավալի և կատարած այցելությունների պատկերի մասին, պահպանել Ձեր նախընտրություններին վերաբերող տվյալներ, որոնք մեզ թույլ են տալիս հարմարեցնել կայքը Ձեր անհատական հերաքրքրություններին, արագացնել Ձեր կատարած որոնումները և ճանաչել Ձեզ, երբ դուք օգտվում եք կայքից:

Մենք կարող ենք նաև օգտվել այս ինֆորմացիայից՝ երրորդ կողմ հանդիսացող գործընկերների որոշ հայտարարություններ ցուցադրելու կամ նրանց թիրախային լսարանին հասցնելու համար: Սակայն, անկախ այն հանգամանքից, որ նշված նպատակներով առանց Ձեր համաձայնության մենք չենք բացահայտի Ձեր անձնական տվյալները, այդուհանդերձ, սեղմումով կամ այլ կերպ կայքում տեղադրված հայտարարությունների հետ առնչվելով՝ երրորդ կողմին Դուք կարող եք ներկայանալ որպես իր չափանիշներին համապատասխանող թիրախային լսարան:

Ո՞ւմ համար ենք բացահայտում Ձեր տվյալները

Ի լրումն ասվածի՝ մենք կարող ենք բացահայտել մեր հավաքած կամ Ձեր տրամադրած անձնական տվյալները աշխատակազմի անդամների, կապալառուների և «Կրթություն բոլորի համար»-ին ծառայություն մատուցողների համար: Մենք կարող ենք նաև տրամադրել Ձեր տվյալները որոշ համախոհ կառույցների (ներառյալ նրանց աշխատակազմերը, կապալառուները և ծառայություն մատուցողները), ինչպիսին «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի ընկերներ» կազմակերպությունն է, որը շահույթ չհետապնդող մարմին է Կալիֆոռնիայում: Կարող է նաև ծագել այդ տեղեկատվության հրապարակման անհրաժեշտություն՝ ի պատասխան որևէ դատական որոշման, օրենքի կամ իրավական գործընթացի հայցի՝ ներառյալ կառավարական կամ որևէ կանոնակարգային այլ բնույթի հարցմանը պատասխանելը, կամ այն դեպքում, երբ մենք գտնում ենք անհրաժեշտ կամ տեղին բացահայտել Ձեր տվյալները՝ ելնելով «Կրթություն բոլորի համար»-ի, մեր դոնորների և այցելուների իրավունքների, սեփականության և կամ անվտանգության պաշտպանության նկատառումներից:

Մենք կարող ենք առանց սահմանափակումների հրապարակել նաև մեր այցելուների և դոնորների մասին համահավաք տեղեկատվություն, ինչպես նաև տեղեկատվություն, որը չի բացահայտում որևէ անհատի կամ սուբյեկտի ինքնությունը:

Մեր կողմից չի հրապարակվի Ձեր որևէ անձնական տեղեկատվություն երրորդ կողմերի համար այլ կերպ, քան վերը նշված կարգով:

Տվյալների անվտանգություն

Ցավոք, ինտերնետի կամ բջջային հեռահաղորդակցության հարթակների միջոցով ինֆորմացիայի փոխանցումը ամբողջովին անվտանգ չէ: Չնայած այն բանին, որ մենք ամեն կերպ ջանում ենք պաշտպանել Ձեր անձնական ինֆորմացիան, այդուհանդերձ մենք չենք կարող երաշխավորել դրա անվտանգությունը ինտերնետային կայքի միջոցով փոխանցվելու դեպքում: Անձնական տեղեկատվության փոխանցման համար կայքը պատասխանատվություն չի կրում:

Փոփոխություններ գաղտնիության քաղաքականության մեջ

Ժամանակ առ ժամանակ մենք կարող ենք վերանայել մեր գաղտնիության քաղաքականությունը: Մեր կայքի օգտատերերի անձնական տեղեկատվության նկատմամբ մեր մոտեցումներում շոշափելի փոփոխությունների դեպքում գաղտնիության նոր քաղաքականությունը կհրապարակվի սույն էջում:

Գաղտնիության քաղաքականության վերջին լրամշակման ամսաթիվը նշված է սույն էջի վերնամասում: Խնդրում ենք պարբերաբար հետևել այս էջին՝ դրանում կատարվող փոփոխություններին իրազեկ լինելու համար: